ԿԱՐԾԻՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է դրվել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Դրական ենք գնահատում նախագծի գաղափարը՝ հաշվի առնելով նաև «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կատարած ուսումնասիրությունները և վերջին ամիսներին ներկայացված առաջարկները՝ ***ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել աշխատանքային վեճեր քննելու կարգ՝ հատուկ վարույթի շրջանակներում՝ ապահովելով քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի հետ հավասար երաշխիքներ:***

Այնուամենայնիվ, հաշվի առնելով Կազմակերպության իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները՝ առաջարկում ենք վերանայել նախագիծը՝ հետևյալ հարցերի առնչությամբ.

1. Այսպես՝ Նախագծով նախատեսվում է Օրենսգրքում ավելացնել նոր գլուխ և Հոդված 222.28, որի 1-ին մասով նախատեսվում է, որ Վարչական դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է հանրային ծառայության իրականացման ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև հանրային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:

Գտնում ենք, որ հանրային ծառայություն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի սահմանումը նշված նորմով լիարժեք չէ, և չի ներառում դատական պրակտիկայում հանրային ծառայողների կողմից պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ներկայացված՝ ծառայության հետ կապված, ծառայության ընթացքում ծագած բոլոր վեճերը, այդ թվում՝ արձակուրդի, աշխատավարձի բռնագանձման, պայմանագրի էական պայմանների փոփոխության՝ անձին այլ պաշտոնի տեղափոխելու հետ կապված վեճերը:

Ուստի առաջարկում ենք վերանայել նորմը՝ նախատեսելով, որ հատուկ վարույթի կարգով քննվում են հանրային ծառայության իրականացման ընթացքում ծագած բոլոր վեճերը, ինչպես նաև հանրային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:

2. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վեճերը վարչական դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից իրականացվել է աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն (հետայսու տեքստում՝ նաև Ուսումնասիրություն)[1], ինչը ցույց է տվել, որ հանրային ծառայությունից ազատելու գործերով՝ և՛ կարգապահական խախտման և՛ այլ հիմքերով (ուսումնասիրվել է շուրջ 60 դատական գործ) դատավարությունը տևել է միջինը 1 տարի, մինչև 3 ամիս տևել է ընդամենը մեկ գործ, և ընդամենը 4 գործ՝ մինչև 6 ամիս, գործերի առավելագույն տևողությունը՝ 2 տարի: Կարգապահական տույժի վիճարկման գործերով (ուսումնասիրվել է 7 գործ) քննությունը Վարչական դատարանում տևել է 3 ամսից մինչև 1 տարի 5 ամիս:

Բացի այդ, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը[2], որով առաջարկվում է աշխատանքային վեճերով գործերի քննությունը՝ երեք ամսվա փոխարեն վեց ամիս՝ հաշվի առնելով դատական պրակտիկան այն մասին, որ դատարանները չեն կարողանում նշված ժամկետներում իրականացնել նշված գործերի քննություն և լուծում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հոդվածում սահմանված ժամկետը վերանայել՝ դարձնելով 6 ամիս:

3. Բացի այդ, Ուսումնասիրության[3] արդյունքում նկատվել է նաև Վարչական դատարանի ոչ միատեսակ պրակտիկան հանրային ծառայության հետ կապված գործերով Հայցվորի կողմից պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում այնուամենայնիվ վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ դատական ակտերում նշում կատարելու հարցում: Այդպես, գործերի միայն մի մասում է դատարանը վճռով հստակ նշել, որ թեեւ Հայցվորի կողմից վճարվել է պետական տուրք, սակայն, նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման եւ աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով հայցվորներն ազատված են դատարաններում պետական տուրքի վճարումից, անհրաժեշտ է վերադարձնել վճարված պետական տուրքը[4]: Իսկ այլ դեպքերում, թեեւ Դատարանը նշել է, որ Հայցվորը վճարել է պետական տուրք այն դեպքում, երբ ազատված է եղել նման պարտականությունից, սակայն առանձին նշում չի կատարել վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ[5]:

---

[1] https://prwb.am/2022/07/12/zekuyc%e2%80%a4ashxatankhayin-gortcerov-datakan-praktikayi-usumnasiruthyun%e2%80%a4-ashxatankhayin-iravunkhi-xndirner/
[2] https://www.e-draft.am/projects/5631/justification
[3] https://prwb.am/2023/02/23/hamarotagir/
[4] ԱՐԴ1/5004/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786173061; ՎԴ/0087/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929850; ՎԴ/5626/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935864
[5] ՎԴ/2346/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809944678

Ուստի, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա դրույթների համանմանությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվող փոփոխությունների համատեքստում փոփոխել պետական տուրքը վերադարձնելու կարգավորումները, ի թիվս այլնի, **նախատեսել Դատարանի պարտականությունը՝ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները: Բացի այդ, ներառել նշում վերադարձի մասին դատական ակտի եզրափակիչ մասում: Դատական ակտում ավել վճարված պետական տուրքի՝ վերադարձման մասին նշումը հնարավորություն կտա հատկապես խոցելի խմբում գտնվող քաղաքացիներին տեղեկանալ իրենց կողմից վճարված պետական տուրքի՝ վերադարձման ենթակա լինելու մասին և ձեռնամուխ լինել իրենց իրավունքների իրացմանը:**

Առաջարկում ենք նաև հարակից օրենքում՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում՝ 39-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ ֆինանսական մարմնին պետական տուրքի վերադարձման դիմում ներկայացնելիս Դատարանի կողմից դատական ակտում պետական տուրքի՝ վերադարձման ենթակա լինելու մասին նշումը, համապատասխանաբար նաև վերադարձման ենթակա գումարի չափի վերաբերյալ նշմամբ, պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի հետ միասին բավարար հիմք է Ֆինանսական մարմնի կողմից դիմումը բավարարելու և վճարված պետական տուրքը վերադարձնելու համար (գործող՝ տեղեկանք ներկայացնելու պարտականության փոխարեն), ինչը ավելորդ վարչարարությունից կազատի և՛ ֆիզիկական անձին, և՛ Դատարանին: